

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱՆԿԱԽ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՆՑԱՎՈՐ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆԸ (ԼՎԱՑՄԱՆԸ) ԵՎ ԱՀԱԲԵԿ-  
ՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ  
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 ապրիլի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի,  
Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի  
2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաս-  
տանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի  
5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության  
մասնակից պետությունների՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը  
(լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու մասին  
պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի  
Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու  
վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. Սարգսյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Պայմանագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 5-ին, Դուշանբեում՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու իրավական հիմքերը կատարելագործելու, հանցավոր գործունեությունից ստացված եկամուտներից և հանցագործություններ կատարելու համար օգտագործվող այլ միջոցներից հանցագործներին զրկելու, մասնակից պետությունների ազգային օրենսդրության ներդաշնակեցման, իրավական օգնություն ցույց տալու նպատակով:

2. Պայմանագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, որոշել իրենց իրավասության շրջանակներում պայմանագրի իրագործման լիազորություններն իրականացնող իրավասու պետական մարմինների ցանկը՝ դրանում նշելով լիազորված մարմինը, որն իրականացնում է պարտադիր վերահսկողության ենթակա գործարքների և կասկածելի գործարքների վերաբերյալ հաղորդագրությունների ստացումը և վերլուծումը, ինչպես նաև հանցավոր եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր դեպքերին առնչվող տեղեկատվության փոխանցումն իրավապահ մարմիններին:

Հայաստանի Հանրապետությունը պետք է նաև կրի ՀՀ տարածքում առաջացած՝ հարցման (հանձնարարության) կատարման հետ կապված ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի ՀՀ օրենսդրության ներդաշնակեցման համար՝ հաշվի առնելով

հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու ուղղությամբ միջազգային իրավունքի նորմերը:

Հայաստանի Հանրապետությունը միաժամանակ պարտավոր է՝

- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք իր իրավասու մարմիններին թույլ են տալիս նույնականացնել, որոնք հանցավոր եկամուտները և ահաբեկչության ֆինանսավորման համար միջոցները, կանխել ու խափանել նման եկամուտների և միջոցների հետ կապված գործողություններն ու գործարքները, դրանց փոխանցումը կամ այլ ձևով տնօրինումը,

- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք իր իրավասու մարմիններին իրավունք են տալիս հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու միջոցների ձեռնարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն հայցել,

- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք դրամական միջոցների կամ այլ ունեցվածքի հետ կապված գործարքներ իրականացնող կազմակերպություններին պարտավորեցնում են հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկել,

- որոշել այն պետական մարմինների ցանկը, որոնք վերահսկողություն են իրականացնում դրամական միջոցների կամ այլ ունեցվածքի հետ կապված գործարքներ կատարող կազմակերպությունների կողմից հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու ուղղությամբ պայմանագրում նշված միջոցների իրագործման նկատմամբ,

- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնք սահմանում են դրամական միջոցների կամ այլ ունեցվածքի հետ կապված գործարքներ իրականացնող կազմակերպությունների պատասխանատվությունը տեղեկություններ տրամադրելուց խուսափելու կամ թաքցնելու, ինչպես նաև հանցավոր եկամուտների

օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու հետ կապված պարտավորությունները չկատարելու համար,

- ընդունել նորմատիվ իրավական ակտեր, որոնց նպատակն է ապահովել հանցավոր եկամուտների, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման համար միջոցների բռնագրավումը, ձեռնարկել օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրով արգելված արարքները քրեորեն պատժելի արարք ճանաչելու համար:

Պայմանագրի դրույթների զարգացման նպատակով մասնակից պետությունների իրավասու մարմինները կարող են միմյանց հետ կնքել միջգերատեսչական պայմանագրեր:

Պայմանագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը մասնակից պետությունների միջև լուծվում են շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների և քննակցությունների միջոցով:

Քննության առարկա պայմանագրով ստանձնած պարտավորությունները լիովին համահունչ են ՀՀ ունիվերսալ միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ նաև «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 1999թ. դեկտեմբերի 9-ի Նյու Յորքի միջազգային կոնվենցիայով ստանձնած պարտավորություններին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 5-ին Դուշանբեում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը (լվացմանը) և ահաբեկչության ֆինանսավորմանը

դիմագրավելու մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

1 ապրիլի 2008 թվականի  
ՍԴՈ-743